

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 14-ի N 1643- Ն որոշման

ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՆՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ
ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒՆՏԻՎԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն իրավական ակտով սահմանվում են հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:

2. Սույն իրավական ակտի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման աշխատանքների կատարման վրա:

II. ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն իրավական ակտում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

1) **հող**՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից,

ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

2) *հողի բերրի շերտ*՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

3) *հողի բերրիություն*՝ սնուցման տարրերի, խոնավության ու օդի նկատմամբ բույսերի պահանջը բավարարող և դրանց բնականոն կենսագործունեության պայմաններն ապահովող հողի ունակություն.

4) *հնարավոր բերրի ապարներ*՝ բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական և (կամ) ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ.

5) *քիչ բերրի ապարներ*՝ բուսականության աճի համար անբարենպաստ քիմիական և (կամ) ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ.

6) *ոչ բերրի ապարներ*՝ բուսականության աճին խոչընդոտող քիմիական և (կամ) ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ.

7) *խախտված հողեր*՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

8) *խախտված հողերի դասակարգում*՝ խախտված հողերի տարաբաժանման համակարգ՝ ըստ՝

ա. ռեկուլտիվացման ուղղությունների՝ համաձայն N 1 աղյուսակի,

բ. տեխնածին ռելիեֆի՝ համաձայն N 2 աղյուսակի,

գ. ջրավորվածության բնույթի՝ համաձայն N 3 աղյուսակի,

դ. մակաբացման և պարփակող ապարների՝ համաձայն N 4 աղյուսակի.

9) *հողերի ռեկուլտիվացման կենսաբանական փուլ*՝ խախտված հողերի բերրիության վերականգնման ագրոքիմիական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների համալիր.

10) *հողերի ռեկուլտիվացման տեխնիկական փուլ*՝ խախտված հողերի նախապատրաստումը հետագա նպատակային օգտագործման համար՝ հատակագծման, թեքությունների ձևավորման, հողի ու բերրի ապարների հանման, տեղափոխման ու ռեկուլ-

տիվացվող հողերի վրա դրանց տեղադրման, ճանապարհների ու հիդրոտեխնիկական կառույցների շինարարության միջոցով.

11) *ռեկուլտիվացվող շերտ*՝ ռեկուլտիվացման տեխնիկական փուլում կենսաբանական ռեկուլտիվացման համար բարենպաստ պայմաններով հատուկ ստեղծվող բուսահողի վերին շերտ.

12) *ապարների դասակարգում*՝ բուսահողային հատկությունները հաշվի առնելով՝ մակաբացման և պարփակող ապարների համակարգում՝ ըստ պիտանիության.

13) *հողերի հարթեցում*՝ խախտված հողերի մակերեսի հարթեցում, հանքերի լանջերի, լցակույտերի և կողերի թեքությունների մեղմում կամ անկյունների պակասեցում՝ դրանց հետագա օգտագործմանը համապատասխան.

14) *հողերի կոպիտ հարթեցում*՝ հողային աշխատանքների հիմնական ծավալի կատարմամբ հողի մակերեսի նախնական հարթեցում.

15) *հողերի մաքուր հարթեցում*՝ հողային աշխատանքների աննշան ծավալների դեպքում հողի մակերեսի վերջնական հարթեցում և միկրոռելիեֆի ուղղում.

16) *թեքությունների (շեղերի) հարթեցում*՝ լցակույտերի և հանքային փորվածքների կողերի թեքությունների (շեղերի) անկյունների պակասեցման նպատակով կատարվող հողային աշխատանքներ.

17) *մակաբացման ապարներ*՝ բաց եղանակով լեռնային աշխատանքների իրականացման ընթացքում, որպես լցակույտային գրունտ, հանման և տեղափոխման ենթակա օգտակար հանածո ծածկող կամ պարփակող լեռնային ապարներ.

18) *պարփակող լեռնային ապարներ*՝ օգտակար հանածո պարունակող մակաբացման ապարներ.

19) *լցակույտային գրունտ*՝ հանման, տեղափոխման և լցակույտի գոյացման պրոցեսներում փխրեցված և քիչ թե շատ միախառնված լցակույտ կազմող լեռնային ապարներ.

20) *հանքային փորվածք*՝ բաց եղանակով արդյունահանման արդյունքում գոյացած պինդ օգտակար հանածոների լեռնային փորվածքների ամբողջություն՝ ներքին լցակույտերով կամ առանց դրանց.

21) *լցակույտ*՝ լցակույտային գրունտներից, օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության, արդյունահանման և (կամ) վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններից, արդյունաբերական ու կենցաղային թափոններից գոյացած արհեստական հողաթումբ.

22) *արդաքին լցակույտ*՝ հանքի եզրագծից դուրս ընդերքօգտագործման թափոնների տեղադրման արդյունքում գոյացած լցակույտ.

23) *ներքին լցակույտ*՝ հանքի տարածքում ընդերքօգտագործման թափոնների տեղադրման արդյունքում գոյացած լցակույտ.

24) *ճկվածք*՝ առանց հոծության պատռվածքի հողի մակերեսի իջեցման արդյունքում առաջացած ճկված տեղամաս, որը պայմանավորված է ստորգետնյա լեռնային փորվածքների կամ լցակույտերում լիցքային ապարների պնդեցման ազդեցությամբ:

III. ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՆԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ռեկուլտիվացման ենթակա են բոլոր կատեգորիաների հողերը, որոնք խախտված հողերի բացասական ներգործության հետևանքով լրիվ (կամ մասնակիորեն) կորցրել են (կամ կարող են կորցնել) իրենց արդյունավետությունը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի):

5. Խախտված հողերի ռեկուլտիվացվող աշխատանքների նախագծման ժամանակ պետք է հաշվի առնվեն հետևյալ գործոնները՝

1) տեղանքի բնական պայմանները (կլիմայական, լեռնակազմական, երկրաբանական, հիդրոլոգիական, վեգետացիոն).

2) խախտված հողերի տեղադիրքը.

3) շահագործման ենթակա տեղանքի զարգացման հեռանկարները.

4) ռեկուլտիվացման պահին խախտված հողերի փաստացի կամ կանխատեսվող վիճակը (մակերեսը, տեխնածին ռելիեֆի ձևը, բնական ներաճի աստիճանը, խախտված հողերի օգտագործումը, հողի բերրի շերտի ու հնարավոր բերրի ապարների առկայությունը, ստորերկրյա ջրերի հորիզոնի, ողողատների, չորացման ու ողողամաշման (էրոզիոն) գործընթացների կանխատեսումները, հողի աղտոտման աստիճանը).

5) հողի քիմիական և հատիկաչափական ցուցանիշները, ագրոքիմիական և ագրոֆիզիկական հատկությունները, մակաբացման ու օգտակար հանածո պարունակող ապարների և լցակույտերում դրանց խառնուրդների ինժեներակրաբանական բնութագրերը.

6) խախտված հողերի տեղակայման շրջանի տնտեսական, սոցիալական և սանիտարահիգիենիկ պայմանները.

7) ռեկուլտիվացված հողերի օգտագործման ժամկետը՝ հաշվի առնելով նաև կրկնակի խախտումների հնարավորությունը:

6. Ռեկուլտիվացման ուղղությունն ընտրվում է՝ համաձայն N 1 աղյուսակի:

7. Խախտված հողերը ռեկուլտիվացվում են գյուղատնտեսական, բնապահպանական, անտառապատման կամ հանգստի (ռեկրացիոն) ուղղություններով՝ համաձայն N 1 աղյուսակի:

8. Հողերի ռեկուլտիվացման տեխնիկական փուլի իրականացման ժամանակ, կախված հողերի ռեկուլտիվացման ուղղությունից և հողի կատեգորիայից, իրականացվում են հետևյալ հիմնական աշխատանքները՝

1) լցակույտերի մակերեսի կոպիտ և մաքուր հարթեցում, ջրառքերիչների, ջրատարների ու լեռնային ջրանցքների լցում, թեքությունների հարթեցում կամ դարավանդավորում, հանքահորերի փլվածքների լցում և հարթեցում.

2) ռեկուլտիվացվող մակերեսից ապարների խոշոր չափեր ունեցող բեկորների, արդյունաբերական կառուցվածքների ու շինարարական աղբի հեռացում՝ դրանց հետագա թաղման կամ պահեստավորման պայմանով.

3) ռեկուլտիվացվող տեղամասերում ճանապարհների և ուղիների կառուցում հաշվի առնելով գյուղատնտեսական, անտառային տնտեսության և այլ տեխնիկայի տեղափոխման հնարավորությունը.

4) անհրաժեշտության դեպքում ցամաքուղային (ղրենաժային) ու ջրահեռացող ցանցի և այլ հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն.

5) ամբարտակների, պատվարների ու ջրաբերուկների տարալուծում կամ օգտագործում, տեխնածին լճերի ու վտակների լցում, գետերի հունների բարեկարգում.

6) հանքերի հատակի և կողերի կառուցում, մնացորդային խրամների ձևավորում, թեքությունների (շեղերի) ամրապնդում.

7) ռեկուլտիվացվող շերտի ստեղծում ու բարելավում, վնասակար նյութեր պարունակող ապարների ու աղտոտված հողերի բերրի ապարների շերտով ծածկում, իսկ անհնարինության դեպքում՝ մելիորացում.

8) անհրաժեշտության դեպքում էկրանավորող շերտի ստեղծում.

9) հնարավոր բերրի և (կամ) բերրի հողի շերտով մակերեսի ծածկում.

10) տարածքի հակաէրոզիոն շերտի կազմավորում:

9. Ռեկուլտիվացվող շերտի մակերեսի գերխտացումը նվազեցնելու նպատակով հողերի հարթեցման աշխատանքների իրականացման ժամանակ հողերի մաքուր հարթեցումն իրականացվում է գրունտի վրա ցածր տեսակարար ճնշմամբ մեքենաներով:

10. Բույսերի արմատային համակարգի զարգացմանը նպաստող պայմաններ ստեղծելու նպատակով տեղամասի նախապատրաստման ժամանակ իրականացվում է խտացված հորիզոնի խոր և ոչ լցակույտային փխրեցում:

11. Խախտված հողերի և դրանց հարող տարածքների ռեկուլտիվացման համալիր բոլոր աշխատանքներն ավարտից հետո ապահովում են լավագույն (օպտիմալ) կազմավորված և էկոլոգիապես հավասարակշռված կայուն լանդշաֆտ:

12. Ռեկուլտիվացման կենսաբանական փուլի իրականացման ժամանակ հաշվի են առնվում հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ ռեկուլտիվացման ուղղությունների օգտագործման:

13. Գյուղատնտեսական և անտառապատման նպատակներով հողերի կենսաբանական ռեկուլտիվացման ընթացքում այդ հողատարածքներն անցնում են մելիորատիվ նախապատրաստման փուլ:

IV. ԲԱՑ ԵՂԱՆԱԿՈՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Բաց եղանակով ընդերքօգտագործման աշխատանքների դեպքում ռեկուլտիվացման ենթակա են ներքին և արտաքին լցակույտերը, հանքային փորվածքները և ընդերքօգտագործման աշխատանքների հետևանքով խախտված այլ տարածքները:

15. Լցակույտերի և հանքային փորվածքների ռեկուլտիվացման աշխատանքներն իրականացվում են հետևյալ պահանջների պահպանմամբ՝

1) հողի բերրի շերտի նախնական հանում և պահեստավորում, հնարավոր բերրի ապարների ընտրողական մշակում՝ ռեկուլտիվացվող շերտի ստեղծման համար անհրաժեշտ ծավալներով.

2) լցակույտերի և հանքային փորվածքների ստեղծում՝ հաշվի առնելով ռեկուլտիվացման ենթակա և ռեկուլտիվացվող մակերեսներն ու դրանց նպատակային նշանակությամբ օգտագործման համար արագ վերադարձը.

3) սողանքների և փլվածքների նկատմամբ կայուն լցակույտերի և հանքային փորվածքների ձևավորում.

4) անձրևաջրերի և տեխնիկական ջրերի (հոսքաջրերի) հեռացման միջոցառումների իրականացում հատուկ հիդրոտեխնիկական շինությունների կառուցմամբ.

5) լցակույտերից վնասակար նյութեր պարունակող ջրերի մաքրում կամ անվտանգ հեռացում.

6) անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ ունեցող ապարներով ռելիու-տիվացվող շերտում ջրային ռեժիմի կարգավորման միջոցառումների ապահովում.

7) ինքնաբոցավառումը բացառող տեխնոլոգիական եղանակներով այրման ենթա-կա ապարներից լցակույտերի ձևավորում:

16. Ներքին լցակույտերի մակերևույթի նվազագույն նիշերը պետք է լինեն ստոր-երկրյա ջրերի կանխատեսվող մակարդակից բարձր:

V. ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆ ԵՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

17. Ստորգետնյա եղանակով ընդերքօգտագործման աշխատանքների հետևան-քով խախտված հողերի ռելիուտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

1) երկրի մակերևույթի պահպանվածության և հողատարածքների նվազագույն ձևափոխման (դեֆորմացիա) ապահովում.

2) ընդերքօգտագործման թափոնների տեղադրման համար նախատեսված և ձևափոխման ենթակա հողատարածքներից հողի բերրի շերտի հանում.

3) ճկվածքների մակերեսների հարթեցում, լեռնային ապարով փվածքների լցում՝ հետագա հարթեցմամբ և հողի բերրի շերտով ծածկմամբ.

4) հանքավայրերի նախնական չորացման նպատակով հորատանցքերից և լեռնային փորվածքներից դուրս մղվող ջրի հեռացում: Ջրահեռացումը կատարվում է այնպես, որպեսզի ջրահեռացող և այլ հաղորդակցման ուղիները չխանգարեն գյուղատնտեսական և այլ տեխնիկայի աշխատանքներին ու չվատթարացնեն հողի մելիորատիվ վիճակը.

5) ընդերքօգտագործման թափոնների կենսաբանական ռելիուտիվացման նախա-պատրաստման ժամանակ թեքությունների հարթեցում կամ դարավանդավորում՝ հաշվի առնելով կանաչապատման և պահպանման (խնամքի) աշխատանքների իրականացման հնարավորությունը.

6) հանքահորերի ճկվածքներում կամ փվածքներում ջրամբարների ստեղծում:

18. Կանաչապատման ժամանակ ծառաթփային բույսերի և խոտերի տեսակների ընտրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով ընդերքօգտագործման թափոնների մակերեսային շերտի քիմիական և ֆիզիկական հողմահարման աստիճանը:

VI. ՏՈՐՖԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

19. Տորֆի արդյունահանման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

1) շահագործման ավարտից անմիջապես հետո մշակված տորֆակուտակների ռեկուլտիվացում.

2) հարթեցում և մակերեսի մաքրում.

3) ֆրեզերային եղանակով մշակման արդյունքում գոյացած փորվածքների ու կտրվածքների եզրագծերի հարթեցում.

4) տորֆի արդյունահանման ընթացում օգտագործվող չորացնող հիդրոտեխնիկական կառույցների և ջրահեռացնող ցանցի սարքին վիճակի ապահովում.

5) ֆրեզերային եղանակով մշակված, մասնավորապես, գյուղատնտեսական մշակաբույսերի տակ գտնվող տորֆակուտակների յուրացում.

6) գյուղատնտեսության համար ոչ պիտանի՝ մշակված տորֆակուտակների վրա անտառատնկարկների, բնապահպանական և (կամ) հանգստի (ռեկրացիոն) համակարգերի, որսորդական տնտեսությունների ստեղծում:

20. Մշակված տորֆակուտակների հանքերում ջրային համակարգերի ստեղծում:

VII. ԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

21. Գծային կառույցների շինարարության, վերակառուցման և շահագործման ժամանակ ռեկուլտիվացման ենթակա են խողովակաշարերի ուղեգծերը, մերձուղեգծային խրամները, կողմնատարները, հողակույտերը:

22. Գյուղատնտեսական հողատեսքերով և անտառատնկարկներով զբաղեցված հողատարածքներում ռեկուլտիվացման աշխատանքները հողի բերրիության վերականգնումն ապահովելու նպատակով ներառվում են գծային կառույցների շինարարության կամ վերակառուցման շինարարական և հավաքման (մոնտաժման) աշխատանքներում:

23. Նախքան մայրուղային խողովակաշարերի, տրանսպորտային ուղիների և ջրանցքների շինարարությունն սկսելը հողի բերրի շերտը հանվում և պահվում է շինարարության մոտակայքում նախատեսված ժամանակավոր լցակույտում՝ աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացման համար օգտագործելու նպատակով:

24. Գծային կառույցների շինարարության ժամանակ հողի ռեկուլտիվացման տեխնիկական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) բոլոր ժամանակավոր սարքավորումների, շինարարական աղբի հավաքում և շինարարական հրապարակից դրանց դուրսբերում.

2) գրունտի խտացումից հետո մակերեսի հարթեցումն ապահովելու նպատակով խողովակաշարերի խրամների լցում.

3) ռեկուլտիվացվող մակերեսին մնացած գրունտի հավասար շերտով տարածում կամ տեղափոխում դրանց համար նախագծով նախատեսված տեղադրման վայրեր.

4) էրոզիոն պրոցեսների կանխարգելման միջոցառումների իրականացում.

5) ռեկուլտիվացվող մակերեսի հողի բերրի շերտով ծածկում:

25. Անտառատնկարկներով զբաղեցված հողերի վրա մայրուղային խողովակաշարերի շինարարության ժամանակ ռեկուլտիվացումը ներառում է հետևյալ աշխատանքները՝

1) փոսերի և խրամների լցում.

2) շինարարական աղբի հեռացմամբ հատկացման գոտու ընդհանուր հարթեցում.

3) մակերևույթի ճմապատում: Մայրուղային խողովակաշարերի բնականոն շահագործմանը խոչընդոտելու դեպքում հատկացման գոտում ծառաթփային բուսականության վերականգնում չի իրականացվում:

26. Հողօգտագործողների կողմից ստորգետնյա խողովակաշարերի և նավթի ու գազի պահեստարանների վրա գտնվող հողերը, ինչպես նաև դրանց պահպանման գոտիների հողերը կառույցների անվտանգությունն ապահովելու նպատակով ռեկուլտիվացվում են այդ կառույցները տնօրինող կամ շահագործող կազմակերպությունների համաձայնությամբ և հսկողությամբ:

27. Երկրաբանական ուսումնասիրության, հետազոտական աշխատանքների և շահագործական հորատանցքերի հորատման դեպքում խախտվող հողերի վրա գտնվող հողի բերրի շերտը հանվում, պահպանվում և օգտագործվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

28. Օգտագործված լվացող հեղուկները և ստացված նավթի ու կոնդենսատի նմուշները պահվում են այդ նպատակով ստեղծված պահոցներում (տարողություններում): Հողի մակերևույթին տեղադրված պահոցները (տարողությունները) պետք է լինեն էկրանավորված:

29. Երկրաբանական ուսումնասիրության, հետազոտական և շահագործական աշխատանքների ավարտից հետո իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) հորատանցքերն ամրացնող կառույցների, շինարարական աղբի և հորատման ընթացքում օգտագործվող նյութերի հեռացում.

2) պահոցների (տարողությունների) լցում և մակերեսի հարթեցում.

3) անհրաժեշտ մեխիորատիվ և հակաէրոզիոն աշխատանքների կատարում.

4) հողի բերրի շերտով խախտված հողի մակերեսի ծածկում:

30. Նավթով, նավթամթերքներով և նավթարդյունաբերական կեղտաջրերով աղտոտված հողերի ռեկուլտիվացման ժամանակ իրականացվում են նավթամթերքների

արագ հեռացմանը և աղակալման ու աղուտավորման վերացմանն ուղղված բնապահ-
պանական միջոցառումներ:

VIII. ՀՈՂԻ ՌԵԿՈՒՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

31. Գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար հողերի ռե-
կուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

1) խախտված հողերի տարածքների ձևավորում՝ տնտեսական արդյունավետ
օգտագործման համար հարմար ռելիեֆով, ձևով, չափով և դրանց մակերեսային շերտի
կենսաբանական ռեկուլտիվացման համար պիտանի ապարների կազմով.

2) խախտված հողերի հարթեցում՝ հաշվի առնելով գյուղատնտեսական տեխ-
նիկայի անխափան աշխատանքի ապահովումը և բացառելով սողանքների ու էրոզիոն
պրոցեսների զարգացումը.

3) հողի բերրի շերտի բացակայության կամ անբավարար առկայության դեպքում
հնարավոր բերրի ապարների օգտագործում՝ հատուկ ագրոտեխնիկական միջոցառում-
ների կիրառմամբ.

4) որպես վարելահողեր օգտագործման համար հողերի բերրի շերտի սակավու-
թյան դեպքում՝ քիչ բերրի ապարների վրա հողի բերրի շերտի փոռում.

5) արմատային համակարգի համար բարենպաստ հողաշերտի ձևավորում կամ
վերականգնում՝ մելիորատիվ միջոցառումների իրականացմամբ, ագրոքիմիական, ագրո-
տեխնիկական, ինժեներային ու հակաէրոզիոն միջոցառումների իրականացում, օրգա-
նական նյութերով հողաշերտի հարստացում:

32. Անտառային հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

1) հողմապաշտպան, ջրակարգավորիչ և ռեկրացիոն նշանակության անտառների
հիմնում.

2) լցակույտների առափների (բերմանների) և թեքությունների (շեպերի) մակերեսի վրա անտառների ստեղծման համար ոչ վնասակար նյութեր պարունակող մանրահողով ռեկուլտիվացվող շերտի ստեղծում.

3) ելնելով ապարների հատկություններից, ջրային ռեժիմի բնույթից և անտառատնկարկների տեսակից՝ ռեկուլտիվացվող շերտի հզորության և կազմի որոշում.

4) էրոզիոն պրոցեսների զարգացումը բացառող և մեքենաների ու մեխանիզմների անխափան աշխատանքն ապահովող տարածքների հարթեցում.

5) հողագրունտի անբարենպաստ պայմանների դեպքում՝ մելիորատիվ դեր կատարող անտառատնկարկների հիմնում.

6) ապարների դասակարգմանը, հիդրոերկրաբանական ռեժիմի բնույթին և այլ բնապահպանական գործոններին համապատասխան՝ ծառաթփային բուսականության ընտրություն:

33. Ջրային հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

1) հանքային փորվածքներում, խրամներում, հանքահորային դաշտերի ձևափոխված տեղամասերում բազմանպատակային օգտագործման ջրամբարների ստեղծում.

2) ջրամբարների համալիր օգտագործում (ջրամատակարարման, ձկնաբուծության և ռոտզման նպատակներով).

3) վնասակար նյութեր պարունակող ապարների, ինքնաբոցավառման հակում ունեցող շերտերի, ջրամբարների հատակի ու ափերի, ջրի մակարդակից վերին կամ փոփոխական մակարդակի գոտիների էկրանավորում.

4) հանքային փորվածքների ողողման և դրանցում ջրի մակարդակի պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հիդրոերկրաբանական կառույցների ստեղծում.

5) ջրամբարների թեքությունների (շեպերի) լվացումն ու սողանքները կանխարգելող միջոցառումների իրականացում.

6) հնարավոր ֆիլտրումից հատակի ու ափերի պաշտպանում.

7) թթու և հիմնային ստորերկրյա ջրերի ջրամբարներ ներթափանցումը կանխարգելող, ջրի կազմի ու բարենպաստ ռեժիմի պահպանումն ապահովող միջոցառումների իրականացում:

8) տարածքի թեքությունների (շեղերի) բարեկարգման և կանաչապատման միջոցառումների իրականացում:

34. Առողջարարական և հանգստի (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործման համար հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

1) խախտված հողերի կոնսերվացման միջոցների ընտրություն՝ կախված խախտված հողերի վիճակից, կազմից և պարունակող ապարների հատկանիշներից, բնակլիմայական պայմաններից, տեխնիկատնտեսական ցուցանիշներից:

2) խախտված հողերի կոնսերվացման ժամանակ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման միջոցառումների իրականացում:

3) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չունեցող և բավարար ջրակայունություն ու ջերմակայունություն ունեցող կապող նյութերի օգտագործմամբ՝ խախտված հողերի մակերեսի ամրապնդում:

4) կենսաբանական ռեկուլտիվացման համար ոչ պիտանի հիմնանյութից կազմված արդյունաբերական թափոնակույտերի մակերեսներին պոտենցիալ բերրի ապարներով էկրանավորող շերտի ստեղծում:

5) մելիորատիվ աշխատանքների իրականացում:

6) տեխնիկական, կենսաբանական կամ քիմիական միջոցներով արդյունաբերական լցակույտերի ամրացում:

7) նվազագույն ծավալով հողային աշխատանքների կատարմամբ տարածքի հարթեցում՝ առկա կամ տեխնիկական փուլի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում առաջացած ռելիեֆի ձևի պահպանմամբ:

8) հանգստի և սպորտով զբաղվելու համար կառույցների շինարարության ժամանակ գրունտների կայունության ապահովում, ջրային օբյեկտների ռեկրեացիոն գոտիների նախագծում, շինարարություն և շահագործում:

ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒՆՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խախտված հողերի խմբերն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների	Ռեկուլտիվացված հողերի հետագա օգտագործումը
Գյուղատնտեսական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի և այլ հողատեսքերի հիմնում
Անտառապատման ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	ընդհանուր տնտեսական և դաշտապաշտպան նշանակության անտառատնկարկների, անտառատնկարանների հիմնում
Ջրային ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	խմելու ջրի, կենցաղային, գյուղատնտեսական, առողջարարական, բնապահպանական, արդյունաբերական, ջրատնտեսական, էներգետիկայի, պետության ու համայնքների կարիքների համար անհրաժեշտ ջրային համակարգերի հիմնում
Առողջարարական և հանգստի ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բուժական, առողջարարական վայրերի ու սանիտարական գոտիների, հանգստի, սպորտի գոտիների, պուրակների և անտառապուրակների, որսորդական հանդակների, ջրավազանների, զբոսաշրջության բազաների, մարզահրապարակների հիմնում
Բնապահպանական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բնապահպանական նշանակության և հակաէրոզիոն անտառատնկարկների ու ճմապատված տարածքների հիմնում
Շինարարական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բնակավայրերի՝ ընդհանուր օգտագործման, արդյունաբերական, գծային, թափոնների ու մակաբացման ապարների լցակույտերի տեղադրման և այլ կառույցների շինարարական հրապարակների հիմնում

ԽԱՌՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԱԾԻՆ ՌԵԼԻԵՖԻ

Խախտված հողերի խումբը	Խախտված հողերի քննությամբ ըստ ռելիեֆի ձևի	Ռելիեֆի ձևավորումը պայմանավորող գործոնը	Ռելիեֆի գերակայող տարրը	Ռելիեֆի մորֆոմետրիկ բնութագիրը		Հնարավոր օգտագործումը
				բնական մակերևույթի նկատմամբ բարձրությունը կամ խորությունը (մ)	Հանքաստիճան- ների թեքության անկյունը (աստիճան)	
1	2	3	4	5	6	7
Բաց քննությամբ օգտագործման աշխատանքների ժամանակ խախտված հողեր						
հանքային փորվածքներ	փոսորակամար- գային	տորֆային կուտակների հիդրոտեղանակով մշակում	հատակներ, փոսորակների միջև միջակապեր	5-10	30-ից ավելի	ձկնաբուծական ավազաններ, խոտհարքներ, անտառատնկարկներ, բնապահպանական նշանակության ճանապարհով տարածքներ, որսորդական հանդակներ
հանքային փորվածքներ	խրամամարգային	տորֆային կուտակների մեքենայացված եղանակով մշակում	փորվածքների հատակներ և թեքություններ, փորվածքների միջև միջակապեր	1-5	45-ից ավելի	ջրավազաններ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճանապարհով տարածքներ, որսորդական հանդակներ
հանքային փորվածքներ	հարթեցված	տորֆային կուտակների ֆրեզերային եղանակով մշակում	հատակներ	1-5	-	վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ
հանքային փորվածքներ	Դարավանդավոր- ված՝ շատ խորը և չափազանց խորը	օգտակար հանածոների մշակում՝ խորքային ձևի, (8-30°) թեքված կամ շեշտակի անկմամբ, արտաքին լցակայաններ՝ թափոնների տեղափոխմամբ	հանքաստիճանների կողեր, հատակներ, թեքություններ	100-ից ավելի	45-ից ավելի	ջրավորված - բազմանպատակային նշանակության ջրավազաններ, չոր - արդյունաբերական թափոնների տեղադրման և շինարարական հրապարակներ, շեպերի ու բերմանների վրա - անտառատնկարկներ ու բնապահպանական նշանակության ճանապարհով տարածքներ

1	2	3	4	5	6	7
հանքային փորվածքներ	խորը	օգտակար հանածոների խորքային մշակում թեքված կամ շեշտակի անկմամբ, արտաքին լցակույտեր՝ թափոնների տեղափոխմամբ	հանքաստիճանների կողեր, հատակներ, թեքություններ	30-100	45-ից ավելի	ջրավորված - բազմանպատակային նշանակության ջրավազաններ, չոր - արդյունաբերական թափոնների տեղադրման և շինարարական հրապարակներ, շեպերի ու բերմաների վրա - անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ճմապատված տարածքներ
հանքային փորվածքներ	միջին խորությամբ	միջին հզորությամբ (մինչև 30 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ (8-10°) հրապարակային կուտակների մշակում 2-3 հանքաստիճանով, մակաբացումը բացակայում է կամ շատ փոքր հզորությամբ է	հատակներ, հանքաստիճաններ	15-30	45-ից ավելի	ջրավորված - բազմանպատակային նշանակության և ձկնաբուծական ջրավազաններ, չոր - արդյունաբերական թափոնների տեղադրման և շինարարական հրապարակներ, լանջերի վրա - խոտհարքներ, շեպերի վրա - անտառատնկարկներ ու բնապահպանական նշանակության ճմապատված տարածքներ, հանգստի (ոեկրեացիոն) և սպորտային գոտիներ
հանքային փորվածքներ	փոսորակային՝ միջին խորությամբ	միջին հզորությամբ (մինչև 30 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ հրապարակային կուտակների մշակում մեկ հանքաստիճանով, մակաբացումը բացակայում է կամ շատ փոքր հզորությամբ է	հատակներ, թեքություններ	15-30	45-ից ավելի	ջրավորված - բազմանպատակային նշանակության և ձկնաբուծական ջրավազաններ, չոր - արդյունաբերական թափոնների տեղադրման և շինարարական հրապարակների, լանջերի վրա - խոտհարքներ, շեպերի վրա - անտառատնկարկներ ու բնապահպանական նշանակության ճմապատված տարածքներ, հանգստի (ոեկրեացիոն) և սպորտային գոտիներ
հանքային փորվածքներ	ոչ խորը	միջին հզորությամբ (մինչև 5-10 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ	հատակներ, թեքություններ	5-15	30-ից ավելի	ջրավորված - ոռոգման, ձկնաբուծական և հանգստի (ոեկրեացիոն) և սպորտային նշանակության ջրավազաններ, չոր - խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա

1	2	3	4	5	6	7
		հրապարակային կուտակների մշակում մեկ հանքաստիճանով, մակաբացումը բացակայում է կամ շատ փոքր հզորությամբ է				ծառատնկարկներ անտառատնկարկներ, բնապահպանական նշանակության ճնապատված տարածքներ, հանգստի (ռեկրեացիոն) և սպորտային գոտիներ, շինարարական հրապարակներ
հանքային փորվածքներ	ձորակատեսք	փոքր հզորությամբ (մինչև 5 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ հրապարակային կուտակների մշակում, մակաբացումը բացակայում է	հատակներ, թեքություններ	1.5-5.0	45-ից ավելի	ջրավորված - բնապահպանական և ձկնաբուծական նշանակության ջրավազաններ, չոր - խոտհարքներ, արոտավայրեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ
հանքային փորվածքներ	խորքային լեռնադարավանդավորված	ցանկացած հզորությամբ բարձրախորքային կամ մեծ անկմամբ օգտակար հանածոյի կուտակների մշակում մակաբացման ապարներն արտաքին լցակույտեր տեղափոխելով	հանքաստիճանների կողեր, հատակներ	15-ից ավելի	45-ից ավելի	խորքային մասում - բնապահպանական և հանգստի (ռեկրեացիոն) նշանակության ջրավազաններ, լեռնային մասում - բազմամյա տնկարկներ, բնապահպանական և հանգստի (ռեկրեացիոն) նշանակության անտառատնկարկներ
հանքային փորվածքներ	լեռնային դարավանդավորված	ցանկացած հզորությամբ բարձրադիր տեսակի մի քանի հանքաստիճանով օգտակար հանածոյի կուտակների մշակում մակաբացման ապարներն արտաքին լցակույտեր տեղափոխելով	հանքաստիճաններ	30-ից ավելի	45-ից ավելի	բազմամյա տնկարկներ, բնապահպանական և հանգստի (ռեկրեացիոն) և սպորտային նշանակության անտառատնկարկներ

1	2	3	4	5	6	7
ներքին լցակույտեր	բարձրավանդա- կաձև՝ բնական մակերեսի մա- կերևույթին մոտիկ	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոյի խորքային տեսակի փոքր (մինչև 20 մ) հզորությամբ կուտակների մշակման ժամանակ լցակույտերի թափում, մակաբացման հզորությունը մինչև 30 մ	բարձրավանդակ	0-5	25-35	բարձրավանդակների վրա - վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ, լանջերի վրա - բնապահպանական նշանակության անտառատնկարկներ ու ճնապատված տարածքներ, հանգստի (ռեկրեացիոն) և սպորտային գոտիներ
ներքին լցակույտեր	բարձրավանդա- կաձև դարա- վանդավորված	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոյի խորքային տեսակի կուտակների մշակման ժամանակ մի քանի շարահարկերով լցակույտերի թափում, մակաբացման հզորությունը՝ 40 մ-ից ավելի	բարձրավանդակներ, շարահարկերի աշխատանքային կողեր	5-15	45-ից ավելի	բարձրավանդակների վրա - վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ, լանջերի և դարավանդակների վրա - բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի (ռեկրեացիոն) և սպորտային
ներքին լցակույտեր	կատարածև	մակաբացման ապարների տեղափոխում էքսկավատորներով	կատարների համակարգ	գագաթների բարձրությունը՝ մինչև 15	30-45	բարձրավանդակների վրա հարթեցումից հետո՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի (ռեկրեացիոն) և սպորտային գոտիներ
արտաքին լցակույտեր	բարձրավանդա- կաձև՝ միջին բարձրությամբ	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոյի մեկ շարահարկային	բարձրավանդակներ, թեքություններ	15-30	25-30	բարձրավանդակների վրա հարթեցումից հետո - վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ,

1	2	3	4	5	6	7
		լցակույտերի ձևավորումը՝ ներառելով հիդրոլցակույտաառաջացումը				լանջերի վրա - բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, հանգստի (ոեկրեացիոն) և սպորտային գոտիներ
արտաքին լցակույտեր	միջին բարձրությամբ բարձրավանդակաձև և դարավանդավոր	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոների մշակման ժամանակ երկշարահարկ լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքություններով դարավանդակներ	30-50	մինչև 45	բարձրավանդակների վրա հարթեցումից հետո - վարելահողեր, խոտհարքներ, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, լանջերի վրա - բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, հանգստի (ոեկրեացիոն) և սպորտային գոտիներ
արտաքին լցակույտեր	բարձր և շատ բարձր	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոների մշակման ժամանակ բազմաշարահարկ լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքություններով դարավանդակներ	50-100	մինչև 45	բարձրավանդակների ու դարավանդակների վրա - խոտհարքներ, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, լանջերի վրա - բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, հանգստի (ոեկրեացիոն) և սպորտային գոտիներ
արտաքին լցակույտեր	կատարած	ոչ տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոների մշակման ժամանակ կողային լցակույտերի թափում		մինչև 30	մինչև 45	խոտհարքներ, բազմամյա տնկարկներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ
արտաքին լցակույտեր	կատարած՝ դարավանդավորված լանջերով	լցակույտ առաջացնող մեքենաներով բազմաշարահարկ լցակույտերում վերին շարահարկի թափում	բարձրամասով կատարների համակարգ, թեքություններով դարավանդակներ	30-100	մինչև 45	բարձրավանդակների վրա հարթեցումից հետո - խոտհարքներ, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, սանդղակների և թեքությունների վրա - բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ

1	2	3	4	5	6	7
Ստորգետնյա ընդերքօգտագործման աշխատանքների ժամանակ խախտված հողեր						
փլվածքներ	օղակաձև	կտրուկ անկում ունեցող (45° բարձր), փլվող տանիքներով ապարային զանգվածի (շտոկ) կուտակների մշակում	թեքություններ	5-15	45-ից ավելի	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ՝ լցումից հետո
փլվածքներ	կանյոնաձև		թեքություններ	5-15	30-ից ավելի	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ՝ լցումից հետո
փլվածքներ	փոսորակային	հորիզոնական կամ զառիկող (մինչև 270) տեղադիրքով շերտային կուտակների մշակում	թեքություններ, հատակներ	1.5-5.0	5-15	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ
փլվածքներ	դարավանդակա-վորված	զառիկող շերտային հանքակուտակների մշակում՝ բնական մակերեսի թեք ռելիեֆի դեպքում	դարավանդակներ	չի որոշվում	30-ից ավելի	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ
ճկվածքներ	գոգավորված	փոքր և միջին հզորությամբ՝ հորիզոնական և ավիքավոր տեղադիրքով զառիկող շերտային հանքակուտակների մշակում՝ տանիքի փլվածքով	թեքություններ, հատակներ	մինչև 1.5	5-15	վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ, ինքնաաճման տարածքներ
լցակույտեր	բարձրավանդակաձև	ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ միաշարք ապարային լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքություններ	մինչև 30	մինչև 45	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, շինարարական հրապարակներ, տեխնիկական միջոցներով ամրակապում

1	2	3	4	5	6	7
լցակույտեր	բարձրավանդակաձև դարավանդակորված՝ միջին հզորությամբ	ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ երկշարք ապարային լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքությունների դարավանդակներ	15-30	մինչև 45	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, շինարարական հրապարակներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
	բարձրավանդակաձև դարավանդակորված՝ բարձր հզորությամբ	ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ բազմաշարք ապարային լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքությունների դարավանդակներ	30-100	մինչև 45	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
լցակույտեր	կատարած	ճակատային օգտագործմամբ ապարային լցակույտերի թափում	կատարների համակարգ, թեքություններ	մինչև 15	մինչև 45	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
լցակույտեր	կոնաձև	սկիպերի կամ վազոնիկների օգտագործմամբ ապարային լցակույտերի թափում	թեքություններ	30-ից ավելի	30-45	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճմապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
Թափոնների պահեստավորման հետևանքով խախտված հողեր						
լցակույտեր	բարձրավանդակաձև	տրանսպորտային միջոցների օգտագործմամբ մոխրի, խարամի և հարստացման թափոնների տեղադրում՝ միաշարք լցակույտառաջացման ժամանակ	բարձրավանդակներ	մինչև 15	մինչև 35	խոտհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կոնսերվացում

1	2	3	4	5	6	7
լցակույտեր	բարձրավանդակաձև դարավանդակորված՝ միջին բարձրությամբ	տրանսպորտային միջոցների օգտագործմամբ մոխրի, խարամի և հարստացման թափոնների տեղադրում՝ երկշարք լցակույտաառաջացման ժամանակ	բարձրավանդակներ, թեքություններ	15-50	մինչև 35	խոտհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կոնսերվացում
լցակույտեր	բարձր	տրանսպորտային միջոցների օգտագործմամբ մոխրի, խարամի և հարստացման թափոնների տեղադրում՝ բազմաշարք լցակույտաառաջացման ժամանակ	բարձրավանդակներ, թեքություններ	50-ից ավելի	մինչև 35	խոտհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կոնսերվացում
լցակույտեր	կատարած	օգտակար հանածոների չոր հարստացման թափոնների տեղադրում՝ կախովի ճուղանային ճանապարհի օգտագործմամբ	կատարների համակարգեր, թեքություններ	մինչև 25	մինչև 50	խոտհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կոնսերվացում և ամրակապում
	կոնաձև	օգտակար հանածոների չոր հարստացման թափոնների տեղադրում՝ սկիպերի կամ շրջվող վազոնիկների օգտագործմամբ	թեքություններ	30-ից ավելի	30-60	խոտհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, տեխնիկական միջոցներով կոնսերվացում և ամրակապում

1	2	3	4	5	6	7
Գծային կառույցների շինարարության հետևանքով խախտված հողեր						
հողային փորվածքներ	պահուստներ	լեռնային ապարների կորզում հողաթումբ կառուցելու համար	հատակներ, թեքություններ	5-10	մինչև 45	ջրավորված - ձկնաբուծության ու ոռոգման համար և բնապահպանական նշանակության ջրավազաններ, չոր - խոտհարքներ, վարելահողեր, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճմապատված տարածքներ
	առուներ	ջրընդունող և ջրահեռացող կառույցների շինարարություն	թեքություններ	մինչև 5	30-ից ավելի	ջրավորված - բնապահպանական նշանակության ջրավազաններ, չոր - անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ճմապատված տարածքներ
հողաթմբեր	պատնեշներ, հողակույտեր	հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն, փորվածքներից հեռացվող ավելորդ լեռնային ապարների պահեստավորում	թեքություններ	մինչև 15	30-ից ավելի	անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ճմապատված տարածքներ

ԽԱՄՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՁՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ

Ջրավորվածության բնույթով խախտված հողերի խմբավորում				
Խախտված հողերի խումբը	Խոնավության բնույթը	Խոնավության բնույթը որոշող հիմնական գործոնը	Հնարավոր օգտագործումը	
			առանց հիդրոմելիորատիվ և հիդրոտեխնիկական միջոցառումների իրականացման	հիդրոմելիորատիվ և հիդրոտեխնիկական միջոցառումների իրականացմամբ
հանքային և հողային փորվածքներ	չոր	ստորերկրյա ջրերի խորքային (փորվածքի հատակի համեմատ) տեղակայում, ապարների բարձր անջրաթափանցելիություն, մթնոլորտային անբավարար խոնավություն	խոտհարքներ, վարելահողեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից
հանքային և հողային փորվածքներ	չափավոր խոնավ	ստորերկրյա ջրերի ոչ խորքային տեղակայում, մթնոլորտի բավարար խոնավություն, ապարների ոչ բարձր ջրաթափանցելիություն	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից	հիդրոմելիորատիվ և հիդրոտեխնիկական միջոցառումներ չեն պահանջվում
հանքային և հողային փորվածքներ	գերխոնավ	ստորերկրյա ջրերի մոտիկ (փորվածքի հատակի համեմատ) տեղակայում կամ մթնոլորտային տեղումների նշանակալի քանակ և ապարների ցածր ջրաթափանցելիություն	խոտհարքներ, անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ճնապատված տարածքներ	բոլոր տեսակի օգտագործում
հանքային և հողային փորվածքներ	ջրավորված	ապարների ցածր ջրաթափանցելիության դեպքում ստորերկրյա ջրերի սեպասպառում և մակերեսային ջրերի ներհոսք՝ բաց ջրավազանի գոյացմամբ	բնապահպանական նշանակության ջրավազաններ	բազմանպատակային նշանակության ջրավազաններ
լցակույտներ և հողաթմբեր	չոր	մթնոլորտային տեղումների անբավարար քանակ, ապարների բարձր ջրաթափանցելիություն, ստորերկրյա ջրերի խոր (լցակույտի հատակի համեմատ) տեղակայում	խոտհարքներ, վարելահողեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից
հանքային և հողային փորվածքներ	չափավոր խոնավ	մթնոլորտի բավարար խոնավություն, ապարների ոչ բարձր ջրաթափանցելիություն, ստորերկրյա ջրերի ոչ խոր տեղակայում	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից	հիդրոմելիորատիվ և հիդրոտեխնիկական միջոցառումներ չեն պահանջվում
հանքային և հողային փորվածքներ	գերխոնավ	ապարների ցածր թափանցելիություն, մթնոլորտային տեղումների նշանակալի քանակ կամ ստորերկրյա ջրերի մոտիկ (լցակույտի հատակի համեմատ) տեղակայում	խոտհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ	բոլոր տեսակի օգտագործում

ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՄԱԿԱԲԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՐՓԱԿՈՂ ԱՊԱՐՆԵՐԻ

Պիտանիության խումբը	Ինժեներատեխնիկական բնութագիրը	Քիմիական և հատիկաչափական կազմի ցուցանիշը										Հնարավոր օգտագործումը
		ջրային լուծամզով pH	չոր մնացորդը, %	թունավոր աղերի գումարը, % ջրային լուծամզով	CaSO ₄ · 2H ₂ O, % աղաթթվային մզով	CaCO ₃ , % (որոշվում է pH 7.0-ից բարձր)	Al իոնի շարժունակություն, մգ/100 գ (որոշվում է pH 6.5-ից ցածր)	Na, % կլանման ծավալից (որոշվում է pH 6.5-ից բարձր)	հումուս, %	չափամասերի գումարը, %		
										0.01 մմ-ից քիչ	300 մմ-ից ավելի	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Պիրանի												
բուսահողի բերրի շերտը	բուսահողի հումուսացված հորիզոններ	5.5- 8.2	0.1- 0.5	0.0- 0.2	0-10	0-30	0-3	0-5	1 ավելի անտառային և կիսաանապատային գոտու համար, 2՝ ավելի տափաստանային և անտառատափաստանային գոտու համար	10-75	-	վարելահողի, խոտհարքների և տարածքային տիպային ագրոտեխնիկական միջոցառումներով բազմամյա ծառատունկերի տակ, տարբեր նշանակության անտառատնկարկների տակ
հնարավոր բերրի	կապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	5.5- 8.4	0.1- 1.0	0.0-0.4	0-10	0-30	0-3	0-5	1 պակաս անտառային և կիսաանապատային գոտու համար, 2՝ պակաս տափաստանային և անտառատափաստանային գոտու համար	10-75	10-ից ցածր	վարելահողի, խոտհարքների և տարածքային տիպային ագրոտեխնիկական միջոցառումներով բազմամյա ծառատունկեր, տարբեր նշանակության անտառատնկարկների, ջրավազանների համար

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
<i>Քիչ պիտանի</i>												
Ֆիզիկական հատկություններով	շուտ հողմահարվող ցեմենտացված նստվածքային ապարներ	5.5- 8.4	0.1- 1.0	0.0- 0.4	0-10	0-30	0-3	0-5	չի որոշվում	տարբեր հատիկաչափական կազմի	ապարների ֆիզիկական հատկությունների բարելավումից և հատուկ ագրոտեխնիկական միջոցառումներից հետո տարբեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների, հակաէրոզիոն նպատակով խոտցանի, ջրավազանների համար	
	չկապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	5.5- 8.4	0.1- 1.0	0.0- 0.4	0- 10	0-30	0-3	0-5	չի որոշվում	5-10-ը ներառյալ	10-ից ցածր	մելիորատիվ անտառատնկարկների, հակաէրոզիոն նպատակով խոտցանի, կավավորումից և հատուկ ագրոտեխնիկական միջոցառումներից հետո անտառատնկարկների, խոտհարքների համար
	կապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	5.5- 8.4	0.1- 1.0	0.0- 0.4	0-10	0-30	0-3	0-5	չի որոշվում	75-ից ավելի	10-ից ցածր	ապարների ֆիզիկական հատկությունների բարելավումից և հատուկ ագրոտեխնիկական միջոցառումներից հետո տարբեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների, հակաէրոզիոն նպատակով խոտցանի, ջրավազանների համար
<i>Քիչ պիտանի</i>												
Ֆիզիկական հատկություններով	կապակցված չցեմենտացված նստվածքային քարքարոտ ապարներ	5.5- 8.4	0.1- 1.0	0.0- 0.4	0- 10	0-30	0-3	0-5	չի որոշվում	10-75	10-ից ավելի	քարհավաք աշխատանքներից, ապարների ֆիզիկական հատկությունների բարելավումից և հատուկ ագրոտեխնիկական միջոցառումներից հետո տարբեր նշանակության անտառատնկարկների,

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
												հակաէրոզիոն նպատակով խոտցան, ջրավազանների համար
<i>Քիմիական կազմով</i>												
թթու	կապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	3.5-5.5	չի որոշվում				3.18	չի որոշվում		10-75	10-ից ցածր	ապարների քիմիական հատկությունների բարելավումից և հատուկ ազդոտելիսնիկական միջոցառումներից հետո տարրեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների և արոտավայրերի, ջրավազանների համար
հեշտ լուծվող աղեր, գիպս, կարբոնատներ պարունակող	կապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	5.5- 9.0	1.0- 2.0	0.4- 0.8	10-20	30-75	չի որոշվում	5-20	չի որոշվում	10-75	10-ից ցածր	ապարների քիմիական հատկությունների բարելավումից և հատուկ ազդոտելիսնիկական միջոցառումներից հետո տարրեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների և արոտավայրերի համար
ֆիզիկական հատկություններով և քիմիական կազմով	արագ հողմահարվող ցեմենտացված նստվածքային ապարներ	3.5- 9.0	1.0- 2.0	0.4- 0.8	10-20	30-75	3-18	5-20	չի որոշվում	տարրեր հատիկաչափական կազմի		մելիորացիայից և հատուկ ազդոտելիսնիկական միջոցառումներից հետո տարրեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների, հակաէրոզիոն նպատակով խոտցանի համար
ֆիզիկական հատկություններով և քիմիական կազմով	չկապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	3.5- 9.0	1.0- 2.0	0.4- 0.8	10- 20	30-75	3-18	5-20	չի որոշվում	5-10-ը ներառյալ	10-ից ցածր	մելիորացիայից և հատուկ ազդոտելիսնիկական միջոցառումներից հետո տարրեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների, հակաէրոզիոն նպատակով խոտցանի համար

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Քիչ պիտանի												
Ֆիզիկական հատկություններով և քիմիական կազմով	կապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	3.5- 9.0	1.0- 2.0	0.4- 0.8	10- 20	30-75	3-18	5-20	չի որոշվում	75-ից ավելի	10-ից ցածր	մելիորացիայից և հատուկ ագրոտեխնիկական միջոցառումներից հետո տարբեր նշանակության անտառատնկարկների, խոտհարքների, հակաէրոզիոն նպատակով խոտցանի համար
Ոչ պիտանի												
Ֆիզիկական հատկություններով	դժվար հողմահարվող ժայռոտ մագմատիկ, մետամորֆիկ, ցեմենտացված նստվածքային ապարներ	չի որոշվում										
	չկապակցված չցեմենտացված նստվածքային ապարներ	չի որոշվում								0-5	-	ապարները դուրս չեն բերվում մակերեսի վրա, իսկ մակերեսի վրա ապարների առկայության դեպքում անհրաժեշտ է իրականացնել կավավորում, որից հետո հնարավոր է մելիորատիվ անտառատնկարկների ստեղծումը և հակաէրոզիոն նպատակով խոտցան
Քիմիական կազմով												
Սուլֆիդներ պարունակող	կապակցված և չկապակցված չցեմենտացված, արագ հողմահարվող ցեմենտացված նստվածքային ապարներ	մինչև 3.5	չի որոշվում					18-ից ավել	չի որոշվում	տարբեր հատիկաչափական կազմի	ապարները դուրս չեն բերվում մակերեսի վրա, մակերեսի վրա ապարների առկայության դեպքում իրականացվում է արմատական քիմիական մելիորացիա, ապարների թունավոր հատկությունները չեզոքացնող էկրանի ստեղծում, հնարավոր բերրի ապարներով փոխում	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
												տվյալ բնակլիմայական պայմաններում բուսականության բնականոն զարգացումն ապահովող շերտի հզորությամբ
Հեշտ լուծվող աղեր, գիպս, կարբոնատներ պարունակող	կապակցված և չկապակցված չցեմենտացված, արագ հողմահարվող ցեմենտացված նստվածքային ապարներ	6.5-ից ավելի	2.0-ից ավելի	0.8-ից ավելի	20-ից ավելի	75-ից ավելի	չի որոշվում	20-ից ավելի	չի որոշվում	տարբեր հատիկաչափական կազմի		ապարները դուրս չեն բերվում մակերեսի վրա, մակերեսի վրա ապարների առկայության դեպքում իրականացվում է արմատական քիմիական մեկիորացիա, ապարների թունավոր հատկությունները չեզոքացնող էկրանի ստեղծում, հնարավոր բերրի ապարներով փոխում տվյալ բնակլիմայական պայմաններում բուսականության բնականոն զարգացումն ապահովող շերտի հզորությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ